



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ԽԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Լոռի Բերդ

« 08 » մայիսի 2026թ.

Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 5

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացավ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026թ. ութերորդ նստաշրջանի՝ մայիսի 08-ին, ժամը՝ 12:00-ին հրավիրված հերթական նիստը:

Նիստը ուղիղ հեռարձակվում է համայնքապետարանի ֆեյսբուքյան էջով, քանի որ համայնքապետարանի յուբուքյան այլքի հետ առաջացել է տեխնիկական խնդիր:

Նիստին ներկա էին Լոռի Բերդ համայնքի ավագանու տասներկու անդամները, բացակա էին՝ Վահրամ Պապիկյանը, Կարլեն Վերմիշյանը և Միշիկ Գևորգյանը::

Նիստը վարեց՝ Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝ Արայիկ Ներսիսյանը:

Նիստը արձանագրեց՝ Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Անի Մարտիրոսյանը:

Համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որտեղ տեղ էին գտել հետևյալ հարցերը.

Լսեցին՝

ՀՀ ԼՈՌԻ ԽԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ
ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ՝ ՄԱՅԻՍԻ 08-Ի ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկ./Արայիկ Ներսիսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ և 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետերով՝

Ավագանին որոշեց՝ հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026 թվականի ութերորդ նստաշրջանի հերթական նիստի՝ մայիսի 08-ի նիստի օրակարգը՝ համաձայն ստորև ներկայացված տեսքի.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՏՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026 թվականի ութերորդ նստաշրջանի հերթական նիստի՝ մայիսի 08-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից՝ հողամասի ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026 թվականի ութերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին:

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության նախագահի՝ «Ազգային ժողովի հերթական ընտրություններ նշանակելու մասին» թիվ ՆՀ-21-Ն հրամանագիրը՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի շրջանավարտներին վերջին զանգի կապակցությամբ Լոռի Բերդ համայնքի բյուջեից գումար տրամադրելու մասին» հարցը հանել օրակարգից:

12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ՝ ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԶԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Անի Մարտիրոսյան/

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներով, հաշվի առնելով Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի բնակիչ՝ Վալերիկ Վանոյի Չատինյանի դիմումը, ինչպես նաև հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքի ավագանու իրավական, քաղաքաշինության, հողօգտագործման և

գյուղատնտեսության հարցերի մշտական հանձնաժողովի 2026 թվականի ապրիլի 30-ի նիստի թիվ 3 արձանագրությունը՝ (դրական եզրակացություն)

Ավագանին որոշեց՝ թույլատրել Լոռի Բերդ համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի գ. Ագարակ, 16-րդ փողոց, տուն 1 հասցեի բնակիչ՝ Վալերիկ Վանոյի Չատինյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղում գտնվող 06-009-0038-0002 կադաստրային ծածկագրով, 0.0312 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատեսք հողամասին կից՝ համայնքային սեփականություն հանդիսացող՝ 06-009-0038-0026 կադաստրային ծածկագրից առանձնացված 0.0154 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատեսք հողամասը՝ ուղղակի վաճառքի ձևով, հողամասի ընդլայնման նպատակով օտարել նրան՝ /46.200/ քառասունվեց հազար երկու/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով:

Օտարվող հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27-Ա

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՐԻ ԲԵՐԴ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՌԻԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ
ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ
ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկ./Անի Մարտիրոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 18-րդ հոդվածի 24-րդ կետերով՝

Ավագանին որոշեց՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանել՝ 2026 թվականի հունիսի 08-ը, ժամը՝ 12:00-ն:

12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28-Ա/

Նիստի փակում:

Ավագանու անդամներ՝

Ներսիսյան Արայիկ Մենժիկի
Խալաթյան Ավետիք Հարությունի
Շահնազարյան Թամարա Էդիկի
Պապյան Հարություն Միշիկի
Չիբուխչյան Արման Հրաչիկի
Չատինյան Վանո Վալերի
Ներսեսյան Իրինա Վազգենի
Սիմոնյան Անահիտ Բաբկենի
Մարգարյան Սիլվա Ստեփանի
Գրիգորյան Աննա Հրայրի
Սերոբյան Անի Սամվելի
Ասրյան Աննա Տիգրանի

[Handwritten signatures in blue ink corresponding to the list of members]

Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝

Արայիկ Ներսիսյան *[Signature]*

Լիպուռ Լորձանազրեց՝ Անի Մարտիրոսյանը

[Signature]

